

որուն իբր թէ Քալի նախամարը եղած է արմատը արարացոց եւ յետոյ ալ թուրքերուն գործածած խալի (գորգ) բառին:

Հայաստանի եւ հայոց գործածած ոստայնները նման են իրենց դրացիներուն գործածած գորգի ոստայններուն, որոնք չեն տարբերիր նաեւ կապերտներու ոստայններէն: Ոստայնը կը պատրաստուի ուղղահայեաց թելերու ցանցով մը, նման տաւիղի մը կամ քնարի մը, յետոյ վարէն սկսած հարկ եղած գոյներու խաւերով կապերու շարք մը կը կապուի, յետոյ հորիզոնական թելի կամ թելերու փակիչ մը կը դրուի եւ դարձեալ կապերու շարք մը, եւ այսպէս մինչեւ գորգին աւարտիլը:

Սաւակապերը կը բաժնուին երկու գլխաւոր խումբերու, Կէօր-տէզ եւ Սէնա: Սէնաները երկու տեսակ են աջ Սէնա եւ ձախ Սէնա կապեր: Ասոնց կապուելու ձևերը ցոյց տրուած են տախտակին վրայ (Ատտ, էջ 118):

Կէօրտէզ թուրքիոյ մէջ քաղաք մըն է, նշանաւոր իրեն յատուկ գորգերով: Սէնա ալ Պարսկաստանի մէջ նշանաւոր գորգի քաղաք մըն է, ուր գորգեր եւ կապերտներ կը հիւսուին: Յարգ յայտնի չէ թէ ինչո՞ւ այդ կապերը այդպէս կը կոչուին: Որոշ է սակայն որ այդ կապերը այդ քաղաքներուն մէջ չէ որ ստեղծուած են: Դարձեալ ըսեմ որ Կէօրտէզ կապը Սէնային հետ համահասարակ գործածական էր Պարսկաստանի մէջ: Բոլոր հին ու նոր հայկական գորգերը Կէօրտէզ կապով խաւակապուած են: Սակայն անկարելի է խաւակապերու տեսակին վրայ յենլով միայն գորգի մը բնավայրը ստուգել:

Գորգարհետի յատուկ հայկական բառեր ըլլալու են, որոնք սակայն մեզի անծանօթ կը մնան: «Գորգեր եւ կապերտներ գործելու համար հետեւեալ գործիքները կան. ա) վեստանը (ոստայնը), որ երկու դիք դրած եւ ներքեւից ու վերեւից նրանց ծայրերին անցրած շարժական կոլոր փայտերն են, ոստայնը կանգնեցնելուց յետոյ հիլնում են, այն է գորգի կապերտի աստառի թելերն են անցնում կոլոր փայտերի վրայից. այդ թելերի միջից գետնից 1,1/2 արշին բարձր ապակի⁽⁴⁾ են անցկացնում, որը ոստայնի վրայ անցրած առաջի կողմի թելերը յետ ու առաջ է տանում եւ այդ թելերի վրայ հորիզոնական կերպով սկսում են գորգի գոյնզոյն թելերը անցնել եւ կափիչ, քելատու ասուած գործիքներով պնդացնել»:

«Երբ գորգի կամ կապերտի գործուածքը 1/4 կամ աւելի արշին բարձրանում է, թուրացնում են կոլոր փայտին խիտած սեպերը եւ կարպետը ներքեւի կողմով բարձրացնում, սաք համում»:

«Նայած գորգի կամ կապերտի երկայնութեան եւ լայնութեան,

(4) Քուչակեան կոչուած ասղաչարքերուն մէկ քառակին մէջ կը հանդիպինք «Քան զասպապ ի ծայն էի. նա տրկուկ տրկուկ քակեցայ»: